

ԱՌԵՎՏՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՊԱՐՓԱԿՈՂ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1. Կառավարությունների և Եվրոպական համայնքների ներկայացուցիչները, Առևտրի բանակցությունների հանձնախմբի անդամները, հանդիպելով Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուզվայի փուլը եզրափակելու համար, համաձայնում են, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման համաձայնագիրը (սույն Եզրափակիչ փաստաթղթում հիշատակվում է որպես «ԱՀԿ համաձայնագիր»), Նախարարական հայտարարագրերն ու որոշումները և սույնին կցված Ֆինանսական ծառայությունների մասին փոխհամաձայնությունը պարփակում են իրենց բանակցությունների արդյունքները և կազմում են սույն Եզրափակիչ փաստաթղթի անբաժանելի մաս:

2. Ստորագրելով սույն Վերջնական փաստաթուղթը ներկայացուցիչները համաձայնում են.

ա) սահմանված կարգով իրենց համապատասխան իրավասու մարմինների քննարկմանը ներկայացնել ԱՀԿ համաձայնագիրը՝ նպատակ ունենալով ըստ իրենց ընթացակարգերի հաստատելու Համաձայնագիրը, և՛

բ) ընդունել Նախարարական հայտարարագրերն ու որոշումները:

3. Ներկայացուցիչները համաձայնում են, որ ցանկալի է ԱՀԿ համաձայնագրի ընդունումը Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուզվայի փուլի բոլոր մասնակիցների կողմից (այսուհետև՝ «մասնակիցներ»)՝ նպատակ ունենալով, որ այն ուժի մեջ մտնի 1995թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո՝ հնարավորին չափ շուտ: Պունտա դել Էսփեյի Նախարարական հայտարարագրի վերջին կետին համապատասխան՝ Նախարարները կհավաքվեն ոչ ուշ, քան 1994թ. վերջը՝ որոշում կայացնելու արդյունքների միջազգային իրականացման մասին, ներառյալ՝ դրանց ուժի մեջ մտնելու ժամկետները:

4. Ներկայացուցիչները համաձայնում են, որ ԱՀԿ համաձայնագիրը՝ որպես ամբողջություն, բաց է բոլոր մասնակիցների կողմից ստորագրությամբ կամ այլ ձևով ընդունման համար՝ համաձայն դրա XIV Հոդվածի: ԱՀԿ համաձայնագրի 4-րդ Հավելվածում ընդգրկված Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրի ընդունումը և ուժի մեջ մտնելը ղեկավարվում են այդ Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրի դրույթներով:

5. Այն մասնակիցները, որոնք Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի պայմանավորվող կողմեր չեն, մինչ ԱՀԿ համաձայնագրի ընդունումը, նախ, պետք է եզրափակեն Գլխավոր համաձայնագրին իրենց անդամակցելու շուրջ բանակցությունները և դառնան դրա պայմանավորվող կողմեր: Այն մասնակիցների համար, որոնք Գլխավոր համաձայնագրի պայմանավորվող կողմեր չեն եղել Եզրափակիչ փաստաթղթի ընդունման օրը, ժամանակացանկերը վերջնական չեն և պետք է այնուհետև լրացվեն՝ Գլխավոր համաձայնագրին դրանց անդամակցելու և ԱՀԿ համաձայնագիրն ընդունելու նպատակով:

6. Սույն Եզրափակիչ փաստաթուղթն ու դրան կցված տեքստերն ի պահ են տրվում Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի ՊԱՅՄԱՆՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻ Գլխավոր տնօրենին, որը շտապ կարգով յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է դրանց հավաստագրված մեկ պատճեն:

Կատարված է Մարաքեշում հազար ինը հարյուր իննսունչորս թվականի ապրիլ ամսվա տասնհինգերորդ օրը անգլերենով, ֆրանսերենով և իսպաներենով: Տեքստերից յուրաքանչյուրը վավերական է: